ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1

ք. Երևան

«17» «փետրվարի» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ղևոնդ Բարիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետ կապի ապահովման և տվյալ փոխանցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13752000 (տասներեք միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը

միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	<<Ջի էմ Ջեթ սերվիս>> ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց-63	ք.Երևան, Բագրատունյաց 27/1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 900011175016	Հ/Հ 2052122158391001
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 02242665
ՔԿ ծառայություն	Տնօրեն
Ա.Ղազարյան	Ղ.Բարիկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 17» «փետրվարի » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	64211300 /503	**Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ** Ինտերնետի (առնվազն 180 Մբիթ/վրկ սինխրոն արագությամբ) շուրջօրյա տրամադրում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում և քրեակատարողական հիմնարկներում՝ Քրեակատարողական ծառայություն - ք. Երևան, Արշակունյաց 63- (60 Մբիթ/վրկ), «Արմավիր» քկհ - Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա խճուղի թիվ 23 - (10 Մբիթ/վրկ), «Դատապարտյալների հիվանդանոց» քկհ - ք.Երևան, Արշակունյաց 2 - (10 Մբիթ/վրկ), «Երևան - Կենտրոն» քկհ - ք. Երևան, Նալբանյան 104 -10 Մբիթ/վրկ), «Նուբարաշեն» քկհ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 2 - (10 Մբիթ/վրկ), «Վարդաշեն» քկհ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 7 - (10 Մբիթ/վրկ), «Աբովյան» քկհ - Կոտայքի մարզ, ք.Աբովյան, արդյունաբերական թաղ. թիվ 30/1 - (10 Մբիթ/վրկ), «Սևան» քկհ - Կոտայքի մարզ, ք. Հրազդան - (10 Մբիթ/վրկ), «Հրազդան» քկհ - Կոտայքի մարզ, ք.Հրազդան, միկրոշրջան 45 - (10 Մբիթ/վրկ), «Արթիկ» քկհ - Շիրակի մարզ, Հառիճ համայնք - (10 Մբիթ/վրկ), «Կոշ» քկհ - Արագածոտնի մարզ, գ. Կոշ - (10 Մբիթ/վրկ), «Վանաձոր» քկհ - Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տավրոսի 20 - (10 Մբիթ/վրկ), «Գորիս» քկհ - Սյունիքի մարզ, ք.Գորիս, Նարեկացու 5 - (10 Մբիթ/վրկ), Առնվազն 14 ԱՅՓի հասցեների տրամադրում:	ՀՀ դրամ	5832000	1	Ք. Երևան, Արշակունյաց 63 և տեխնիկական բնութագրում նշված բոլոր ՔԿ հիմնարկներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2020թ

		Կատարողը պետք է ապահովի տեղադրվող երթուղիչ սարքավորման դինամիկ կարգավորումը, տորրենտների շեմի կառավարում ըստ պահանջի, սոցիալական ցանցերին հասանելիության շեմի ապահովման կառավարում ըստ պահանջի, դինամիկ ԴՆՍ-ի ծառայություն ըստ պահանջի: Տրաֆիկի օգտագործումն անսահմանափակ: Տեխնիկական բնութագրի տարրերը և նկարագրությունը տես՝ Հավելված 1:					
2	64211300 /504	**Տվյալների փոխանցման ծառայություններ** ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և հիմնարկների միջև տվյալների փոխանցման շուրջօրյա երկկողմանի և սիմետրիկ կապուղու տրամադրում հետևյալ հասցեներով: Քրեակատարողական ծառայություն - ք. Երևան, Արշակունյաց 63- (300 Մբիթ/վրկ), «Արմավիր» քկհ - Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա խճուղի թիվ 23 - (30 Մբիթ/վրկ), «Դատապարտյալների հիվանդանոց» քկհ - ք.Երևան, Արշակունյաց 2 - (30 Մբիթ/վրկ), «Երևան - Կենտրոն» քկհ - ք. Երևան, Նալբանյան 104 - (30 Մբիթ/վրկ), «Նուբարաշեն» քկհ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 2 - (30 Մբիթ/վրկ), «Վարդաշեն» քկհ - ք.Երևան, Նուբարաշենի խճ. 7 - (30 Մբիթ/վրկ), «Աբովյան» քկհ - Կոտայքի մարզ, ք.Աբովյան, արդյունաբերական թաղ. թիվ 30/1 - (30 Մբիթ/վրկ), «Սևան» քկհ - Կոտայքի մարզ, ք. Հրազդան - (30 Մբիթ/վրկ), «Հրազդան» քկհ - Կոտայքի մարզ, ք.Հրազդան, միկրոշրջան 45 - (30 Մբիթ/վրկ), «Արթիկ» քկհ - Շիրակի մարզ, Հառիճ համայնք - (30 Մբիթ/վրկ), «Կոշ» քկհ - Արագածոտնի մարզ, գ. Կոշ - (30 Մբիթ/վրկ), «Վանաձոր» քկհ - Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տավրոսի 20 - (30 Մբիթ/վրկ), «Գորիս» քկհ - Սյունիքի մարզ, ք. Գորիս, Նարեկացու 5 - (30 Մբիթ/վրկ), Կատարողը պետք է ապահովի անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում: Տրաֆիկի օգտագործումն անսահմանափակ: Տեխնիկական բնութագրի տարրերը և նկարագրությունը տես՝ Հավելված 2	ՀՀ դրամ	7920000	1	Ք. Երևան, Արշակունյաց 63 և տեխնիկական բնութագրում նշված բոլոր ՔԿ հիմնարկներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2020թ

Հավելված 1

ԹիՍիՓի/ԱյՓի արձանագրությամբ հեռահաղորդակցության ծառայությունների ապահովում

հ/հ	Տեխնիկական բնութագրի տարրերը	Նկարագրությունը
1	Հեռահաղորդակցության ծառայության տեսակը	Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով, անհասանելիության դեպքում՝ ապահովումը ռադիո կապով
2	Հեռահաղորդակցության ծառայության ապահովման նախապայմանները	Անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային կապուղու անցկացում մինչև օգտվողի նշված վայրը
3	Որակի պահանջներ	Ինտերնետ հասանելիության ապահովում երաշխավորված 1:1 օգտագործման գործակցով, սիմետրիկ, երկկողմանի; Ինտերնետ հասանելիությունը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում Ինտերնետ հասանելիության բացակայությունը 24 ժամ ժամկետով; Մեկ ամսվա ընթացքում Ինտերնետ հասանելիությունը չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 24 ժամ ժամանակով՝ խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում Ինտերնետ հասանելիության բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար: Ցանցային անվտանգության սերտիֆիկացված մասնագետների կողմից ցանցի աշխատանքի վերլուծության ապահովում: Կապի որակի առցանց պարբերական ուսումնասիրության ապահովում: Հակավիրուսային ծրագրային ապահովման հնարավորություն: Շուրջօրյա տեխնիկական սպասարկման ապահովումը կցված մասնագետի միջոցով; Առաջացած թերությունների վերացում 2 ժամվա ընթացքում;
		Օպերատորը պետք է ապահովի «ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) (այսուհետ՝ «ԴՈՍ») հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապ; «ԴՈՍ» հարձակումներից պաշտպանության տեխնիկական նվազագույն պահանջներն են՝ -պետական մարմինների բոլոր տեղեկատվական համակարգերը պետք է պաշտպանված լինեն մեկ և մի քանի հանրային և մասնավոր ԱյՓի-հասցեներից իրականացվող հարձակումներից; -ԹիՍիՓի (TCP) արձանագրություն՝ԹիՍիՓի ՍԻՆ (TCP SYN) –հարձակում ՍԻՆ (SYN) փաթեթների գերբեռնման միջոցով, ոչ լեգիտիմ դրոշներով կոմբինացիա, հարձակում պատուհանի չափսի վրա, հարձակում սեսիայի վրա; -ԷյչԹիԹիՓի (HTTP) արձանագրություն՝ դանդաղ սեսիաներ, էսէսէլ (SSL) հարձակումներ,ԷյչԹիԹիՓիԳԵԹ/ՓՈՍՏ ՅուԱռլ ֆլուդ (HTTP GET/POST URL flood) -ԴիէնէՍ (DNS) արձանագրություն՝Քեշ Փոյզընինգ,ԴիէնէՍ ֆլուդ (Cache Poisoning, DNS flood), ավելացող ուժգնությամբ հարձակումներ; -ՅուԴիՓի/ԱյՍիԵՄ (UDP/ICMP) արձանագրություն՝ ֆլուդ (flood) -ԱյՓի/ԹիՍիՓի/ՅուԴիՓի (IP/TCP/UDP) արձանագրություն՝ ֆրագմենտավորում; -հետագայում հայտնաբերվող նոր մեխանիզմներով «ԴՈՍ» հարձակումներ;

Հավելված 2

	VLAN տեխնոլոգիայի միջոցով, (Layer 2) հեռահաղորդակցության ծառայությունների ապահովում	
հ/հ	Տեխնիկական բնութագրի տարրերը	Նկարագրությունը
1	Հեռահաղորդակցության ծառայության տեսակը	Առանձնացված կապուղիով՝ օպտիկամանրաթելային մալուխով, VLAN տեխնոլոգիայի միջոցով, (Layer 2) հեռահաղորդակցության ծառայություն
2	Հեռահաղորդակցության ծառայության ապահովման նախապայմանները	Անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային կապուղու անցկացում մինչև օգտվողի նշված վայրը
3	Որակի պահանջներ	ծառայության հասանելիության ապահովում երաշխավորված 1:1 օգտագործման գործակցով, սիմետրիկ, երկկողմանի; ծառայության հասանելիությունը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում ծառայության հասանելիության բացակայությունը 24 ժամ ժամկետով; Մեկ ամսվա ընթացքում ծառայության հասանելիությունը չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 24 ժամ ժամանակով՝ խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում ծառայության հասանելիության բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար: Ցանցային անվտանգության սերտիֆիկացված մասնագետների կողմից ցանցի աշխատանքի վերլուծության ապահովում: Կապի որակի առցանց պարբերական ուսումնասիրության ապահովում: Առաջացած թերությունների և կապի խափանումների վերացում 2 ժամվա ընթացքում;

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Ջի էմ Ջեթ սերվիս>> ՍՊԸ
ք.Երևան, Բագրատունյաց 27/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122158391001
ՀՎՀՀ 02242665

Տնօրեն
Ղ.Բարիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 17 » «փետրվարի » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	64211300/503	Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ	1000000	2200000	3400000	5832000	5832000
2	64211300/504	Տվյալների փոխանցման ծառայություններ	-	3200000	4200000	7920000	7920000
	ընդամենը		1000000	5400000	7600000	13752000	13752000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Քաղ. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա.Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Ջի էմ Ջեթ սերվիս>> ՍՊԸ
ք.Երևան, Բագրատունյաց 27/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122158391001
ՀՎՀՀ 02242665
Տնօրեն
Ղ.Բարիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 17 » « 02 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1*
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » « 02 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն